Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

կողմը կոշտացնում է դիրքորոշումը, համառորեն դիմագրավում է արտաքին ճնշումներին՝ պահպանելով սեփական գերակա դիրքերը, այնուհետև ոչ մի արդյունքի չհասնելու դեպքում , իր համար փակված է համարում հարցը, դուրս է գալիս բանակցություններից, ճանաչում է ԼՂՀ-ը անկախությունը՝ պատրաստվելով Ադրբեջանի հետ նոր բախման:

Մենուա Սողոմոնյան
ԵՊՀ

Մեծ Բրիտանիայի դերը ղարաբաղյան հակամարտության շուրջ խաղաղության եւ կայունության հաստատման հարցում 1990-ականների առաջին կեսին

Մեծ Բրիտանիան ի սկզբանե ներգրավված է եղել ղարաբաղյան հակամարտության կարգավորման դժվարին գործընթացում: Ինչպես իմանում ենք Մեծ Բրիտանիայի Արտաքին և համագործակցության գործերի նախարարության պաշտոնական հաղորդագրությունից, 20-րդ դարի վերջին տասնամյակի բրիտանական արտաքին քաղաքականության գլխավոր առաջնահերթությունը համարվել է հետսառըպատերազմյան Եվրոպայի վերակերտումն ու կայունության հաստատումն այդտեղ: Եվ քանի որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասի պետությունները հայտարարեցին Եվրոպայի մաս դառնալու իրենց անխախտ որոշման մասին և բռնեցին եվրաինտեգրման ուղին, ուստի Բրիտանիան պետք է որ շատ անելիքներ ունենար հակամարտություններով լի այս տարածաշրջանում: Թեև այս պետությունը երբեք չի հանդիսացել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում միակ լիազոր միջազգային կառույցի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ, սակայն այն ազդել և շարունակում է ազդեցություն գործել կարգավորման գործընթացի վրա՝ առաջին հերթին տարածաշրջանում իր նավթային շահերի պաշտպանության պահանջից դրդված: Նշենք, որ Մեծ Բրիտանիայի նավթային ընկերությունները այսօր լրջագույն դերակատարություն ունեն ադրբեջանական նավթի արդյունահանման և արտահանման գործում:

Բրիտանական նավթային ընկերությունները, և առաջին հերթին British Petroleum-ը, հսկայական դեր են խաղացել (մինչ օրս էլ շարունակում են խաղալ) Ադրբեջանի նավթի արդյունահանման և

արտահանման ոլորտի զարգացման գործում: Մասնավորապես նշենք, որ ադրբեջանական Ազերի, Չիրագ և Գյունեշլի նավթահանքերի շահագործման նպատակով ձևավորված միջազգային AIOC (Azerbaijan International Operating Company) կոնսորցիումում British Petroleum-ի բաժնեմասն ամենամեծն էր՝ ավելի քան 17%, կոնսորցիումի մյուս ընկերությունների համեմատ: British Petroleum-ը նաև հայտնի Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի գործարկողն է:

Ադրբեջանական նավթի արդյունահանումն ու արտահանումը հավուր պատշաճի իրականացնելու խնդրում առաջնահերթ նշանակություն ունեն տարածաշրջանի խաղաղությունն ու ռազմաքաղաքական կայունությունը, ինչպես նաև տարածաշրջանի պետությունների ներքին կայունությունը: Ինչ վերաբերում է կոնկրետ ղարաբաղյան խնդրի կարգավորման շուրջ բրիտանական շահագրգռությանը, ապա պետք է նշել, որ խաղաղության հաստատման հարցը կենտրոնական է համարվել ինչպես ադրբեջանա-բրիտանական, այնպես էլ հայ-բրիտանական ամենաառաջին շփումներից սկսած: Այսպես, 1992թ. մարտին նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքական սկզբունքների, երկրի ներքին և արտաքին քաղաքական կարևոր հարցերի շուրջ աշխարհի հեղինակավոր որոշ երկրների ղեկավարություններին իրազեկելու նպատակով ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա և Գերմանիա շրջագայած ՀՀ նախագահի քաղաքական վերլուծությանն գծով խորհրդական Ժիրայր Լիպսարիտյանը հավաստում է, որ նշված պետությունների պաշտոնատար շրջանակների հետ հանդիպումներում գերիշխող են եղել Լեռնային Ղարաբաղում զինադադարի հաստատման հնարավորության, խաղաղության համաժողովի հրավիրման, ինչպես նաև Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերությունների հարցերը:

Իսկ ինչ վերաբերում է ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ խաղաղության և կայունության ապահովման հարցում Բրիտանիայի դերին և հնարավորություններին, ապա պետք է նկատել, որ Բրիտանիան ունենալով քաղաքական և տնտեսական մեծ կշիռ աշխարհում և արտաքին ներդրումների առումով լինելով աշխարհի առաջատարներից մեկը, ունակ է լուրջ դերակատարում ունենալ այս հարցում՝ իր նպաստը բերելով հարավկովկասյան տարածաշրջանային համագործակցության հաստատմանը: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը 1999թ. մայիսի 10-11-ը Հայաստան այցելած Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի արտաքին հարցերի կոմիտեի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ բրիտանական խաղաղարար ներգրավվածության հենց այս տարբերակն է մատնանշել:

1990-ականների առաջին կեսին ղարաբաղյան հարցում Մեծ Բրիտանիայի վարած անհավասարակշիռ քաղաքականության դրդապատճառը:

Հայ շատ գիտնականների, հասարակական և քաղաքական գործիչների կողմից տրվել է այն գնահատականը, որ Մեծ Բրիտանիան ԽՍՀՄ փլուզումից մինչ օրս ղարաբաղյան խնդրում միշտ վարել է ընդգծված ադրբեջանամետ քաղաքականություն: Հատկապես 1990-ականների առաջին կեսին բրիտանա-ադրբեջանական բարձր մակարդակի հանդիպումներում և այլ դեպքերում, ինչպես առհասարակ, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի խնդրի առնչությամբ, բրիտանական կողմն իր հայտարարություններում առանձնակի շեշտել է Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի կարևորությունը: Թեև ներկայումս հայ հասարակական, քաղաքական և գիտական շրջանակներում կարծես թե գնալով ամրապնդվում է այն տեսակետը, որ Լեռնային Ղարաբաղի անկախացման գործընթացը կապ չունի Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի հետ, սակայն նշված ժամանակահատվածում նման հայտարարությունները շատ բացասաբար էին ընկալվում թե ՀՀՇ-ական իշխանությունների, թե հասարակության կողմից՝ հիմք ընդունելով դառն իրականությունը. այն, որ միջազգային հանրությունը Ադրբեջանին ճանաչում է Խորհրդային Ադրբեջանի սահմաններում, և այդ պետության տարածքային ամբողջականությունը դիտվում է այդ սահմաններում: Ինչպես Մեծ Բրիտանիան, այնպես էլ ղարաբաղյան հիմնախնդրի առնչությամբ շահագրգիռ մյուս բոլոր պետությունները (բացառությամբ Հայաստանի) պաշտպանում էին Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքը, ինչի վկայությունն էր. օրինակ՝ ԵԱՀԿ լիսաբոնյան գագաթաժողովը: Այդուհանդերձ, ինչպես նշեցինք. Մեծ Բրիտանիան առանձնակի էր շեշտում այս մասին, ինչն էլ հայ պաշտոնատար շրջանակների կողմից բնորոշվել է որպես «անհավասարակշիռ» քաղաքականություն:

1990-ականների առաջին կեսին բրիտանական իշխանությունների կողմից արված մի շարք հայտարարությունները Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում լինելու նպատակահարմարության մասին, հիրավի անբարենպաստ ազդեցություն էին թողնում հիմնախնդրի կարգավորման գործընթացի վրա, քանզի այդ հայտարարություններն իրենց բնույթով միտված էին կանխորոշելու Լեռնային Ղարաբաղի ադրբեջանանպաստ կարգավիճակը, ուստի և մեզ համար խիստ անբարենպաստ էին թե Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման

իրավունքի, թե Հայաստանի միջազգային հեղինակության տեսանկյուններից:

Հայաստանի և Ադրբեջանի անկախացումը, դրա հետ մեկտեղ ղարաբաղյան հակամարտության ծավալումը և հարցի միջազգայնացումը ժամանակային առումով համընկնում էր բրիտանական նավթային ընկերությունների՝ ադրբեջանական նավթահանքերի շահագործման ոլորտում ներգրավման, Ադրբեջանում բրիտանական նավթային շահերի ձևավորման գործընթացի սկզբնավորմանը: Ուստի տրամաբանական է, որ նշված գործընթացները ազդելու էին մեկը մյուսի վրա և պայմանավորելու բրիտանական քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ: Կարծում ենք, որ բրիտանական կողմի հնչեցրած այդ հայտարարությունների նպատակը ադրբեջանական նավթահանքերի շահագործման շահութաբեր գործում բրիտանական նավթային ընկերությունների ներգրավման երաշխիքների ձեռքբերումն էր, ինչին և ի վերջո հասավ Մեծ Բրիտանիան: Իսկապես, Ադրբեջանի անկախության սկզբնական շրջանում, նամանավանդ Աբուլֆազ Էլչիբեյի նախագահության ժամանակ, օտարերկրյա նավթային որևէ ընկերության ներգրավումը Ադրբեջանի նավթարդյունահանման ոլորտում հաճախ պայմանավորված էր նաև քաղաքական նկատառումներով, այդ ընկերությունը ներկայացնող պետության և Ադրբեջանի միջև քաղաքական հարաբերությունների որակով: Ի թիվս այլ պատճառների (Կասպիցի կարգավիճակի վերաբերյալ ռուս-ադրբեջանական հակասություններ), ադրբեջանցիների բնորոշմամբ Ռուսաստանի «հայամետ» քաղաքականությունը նույնպես պատճառ հանդիսացավ, որ ռուսական նավթային ընկերությունները Էլչիբեյի իշխանության տարիներին դուրս մնացին Բաքվի նավթահանքերի ուսումնասիրման և շահագործման գործընթացից: Սա ենթադրում է, որ ադրբեջանական նավթահանքերի շահագործման ոլորտում հաջող և անխոչընդոտ գործունեությունն երաշխիք էր հանդիսանում տվյալ պետության ադրբեջանանպաստ դիրքորոշումը ղարաբաղյան հարցում:

Արցախյան հարցում Մեծ Բրիտանիայի կողմնակալ դիրքորոշման պատճառ է հանդիսացել է նաև 90-ականների առաջին կեսին Հայաստանի հանդեպ Բրիտանիայի տնտեսական հետաքրքրության բացակայությունը, ինչը պայմանավորված էր Հայաստանում հումքային ռեսուրսների սակավությամբ, պատերազմական իրավիճակով, տարածաշրջանում ընդհանուր անկայունությամբ, երկրի տնտեսական անկմամբ և այլն: «Ներդրումային բարոմետր» խմբի կազմած վարկանիշում, օրինակ 1994թ. մայիսի դրությամբ Հայաստանը,

Ադրբեջանն ու Վրաստանը հետխորհրդային տարածաշրջանում ներդրումային գրավչության առումով ամենատորին սանդղակում էին հայտնվել (գերազանցելով միայն Տաջիկստանին)՝ 100 հնարավորից ունենալով համապատասխանաբար 38,77; 31,58; և 20,93 միավոր: Հավելենք, որ նույնիսկ Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ավարտից տարիներ հետո էլ բրիտանացիները տակավին զգուշանում են մեծածավալ ներդրումներ կատարելու Հայաստանի տնտեսությունում: Մասնավորապես Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի և համագործակցության պետքարտուղարի մշտական տեղակալ Ջոն Քերրը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հետ հանդիպման ժամանակ (6-ը հոկտեմբերի, 2000թ.) այս երևույթը պայմանավորող գործոնների թվում առաջնահերթ նշել է ղարաբաղյան խնդրի կարգավորված չլինելը:

Որպես Մեծ Բրիտանիայի «անհավասարակշիռ» դիրքորոշման պատճառ կարելի է բերել հայ-բրիտանական փոխադարձ տեղեկատվության պակասը հիմնահարցի կարգավորման վերաբերյալ մոտեցումներում: Այս հանգամանքը հաճախ հանգեցնում էր կողմերի միջև թերհասկացության և մշտապես բարձրացվել է որպես առանձին մտահոգության հարց հայ-բրիտանական պաշտոնական շփումներում: Որպես այս երևույթի պատճառ բազմիցս հիշատակվել է Հայաստանում բրիտանական դեսպանության բացակայությունը: Օրինակ՝ Հայաստանում Մեծ Բրիտանիայի Արտակարգ և լիազոր դեսպան Դեյվիդ Միլլերի հետ զրույցի ընթացքում ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ինքն է շեշտում այս խնդրի կարևորությունը՝ նշելով, որ Հայաստանում միշտ զգացվել է Մեծ Բրիտանիայի դեսպանության պակասը: Իսկ վերջին հանգամանքը բրիտանացիները բացատրել են ֆինանսական դժվարությունների առկայությամբ: Հիշեցնենք, որ Ադրբեջանում Մեծ Բրիտանիայի դեսպանությունը բացվեց 1993թ. աշնանը, իսկ Հայաստանում՝ 1995թ. ամռանը:

Քանիցս կարծիքներ են հնչել, որ ԼՂ հարցում Մեծ Բրիտանիայի ադրբեջանանպաստ քաղաքականությունը ունի նաև իր «հյուսիս-իռլանդական» արմատը: Կարծում ենք, որ ղարաբաղյան և հյուսիս-իռլանդական հիմնահարցերը համեմատելիս ավելի շատ տարբերություններ կարելի է գտնել, քան նմանություններ: Ըստ մեզ, գլխավոր և վճռական տարբերությունը կայանում է հետևյալում. դեռ 1985թ. Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի (Դուբլին) կառավարությունները համաձայնագիր են ստորագրել՝ ամրագրելով Հյուսիսային Իռլանդիայի ներկայիս կարգավիճակը: Կողմերը համաձայնել են, որ

այդ կարգավիճակի հետ կապված ցանկացած փոփոխություն կարող է տեղի ունենալ միայն Հյուսիսային Իռլանդիայի բնակչության մեծամասնության կամարտահայտության դեպքում. իսկ մինչ օրս այդ մեծամասնության կամքն է մնալ Մեծ Բրիտանիայի կազմում: Փաստորեն Հյուսիսային Իռլանդիայի ժողովուրդն արդեն իրացրել է իր ինքնորոշման իրավունքը և եթե ցանկանա, որ իր երկրի տարածքն անցնի Իռլանդիայի կազմը, այդ ցանկությանը կտրվի օրինական ընթացք, և Մեծ Բրիտանիան այստեղ ոչ մի խոչընդոտ չի կարող ստեղծել:

1991-94թթ. ԼՂ հակամարտության շուրջ խաղաղության հաստատմանն ուղղված բրիտանական քայլերն ու բացթողումները:

Եթե անզեն աչքով դիտարկենք, թե բրիտանական նավթային քաղաքականությունը ինչ ազդեցություն է թողնում ԼՂ հակամարտության շուրջ կայունության և խաղաղության ձեռքբերման վրա, հակասական պատկերներ կունենանք. մի կողմից հայ բարձրաստիճան պաշտոնյաների (օրինակ՝ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի) շուրթերից լսում ենք Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի՝ հարավկովկասյան տարածաշրջանում կայունություն և խաղաղություն բերելու մասին, մյուս կողմից Ադրբեջանի ղեկավարները թմբկահարում են նավթադոլարների միջոցով Հայաստանին և Ղարաբաղին ռազմապես գերազանցելու և ղարաբաղյան հիմնահարցը ռազմական ճանապարհով Ադրբեջանի օգտին լուծելու մասին: Հայաստանի պաշտոնական, հասարակական, քաղաքական և գիտական շրջաններում տարածված տեսակետ է, որ նավթի գործոնը բացասական դեր է խաղում արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում: Այս մասին բազմիցս է մտքերի փոխանակում տեղի ունեցել հայ-բրիտանական պաշտոնական շփումներում: Մասնավորապես Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության քաղաքական բաժանմունքի արևելյան հետազոտական խմբի ղեկավար Ջոնաթան Էյլսի հետ կայացած զրույցի ժամանակ (11-ը դեկտեմբերի, 1997թ.) ՀՀ ԱԳ փոխնախարար Արմեն Բայբուրդյանը, ներկայացնելով հարցի կարգավորման արտաքին դժվարությունները, նշել է, որ նավթի գործոնի ազդեցությամբ մեծ տերությունները ճնշում են գործադրում Հայաստանի իշխանությունների վրա. Ադրբեջանն էլ, մյուս կողմից, հույսեր է փայփայում, որ նավթի գործարքից ստացված եկամուտը հնարավորություն կտա ռազմական եղանակով լուծելու հարցը: Նավթի գործոնի մասին խոսելիս անհնար է չհիշատակել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի գործոնը (որի գործարկող կազմակերպությունն է «British Petroleum»-ը): Փաստորեն Հայաստանը շրջանցող

տարածաշրջանային կոմունիկացիոն և էներգետիկ ծրագրերը, որոնցից մեկն էլ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի գործարկումն է, լրջորեն սպառնում են մեր երկրի ազգային անվտանգությանը: Այսպիսով պարզվում է, որ Բրիտանիան գոնե անուղղակիորեն ջուր է լցնում Հայաստանի և Ղարաբաղի դեմ պատերազմելու ադրբեջանական ջրաղացի վրա:

Այսուհանդերձ հակված ենք կարծելու, որ այնքանով, որքանով մեր տարածաշրջանում Մեծ Բրիտանիան միլիարդավոր դոլարների ներդրումներ է արել, հետևաբար այդ պետությունը հետևողական պետք է լինի և նույնպես ներդրում ունենա տարածաշրջանի կայունության և խաղաղության ծեռքբերման գործում: Այս առումով Մեծ Բրիտանիայի ցուցաբերած քաղաքական կամքն ու ակտիվ դիվանագիտական գործունեությունը հստակ երևացել է դեռ ղարաբաղյան կոնֆլիկտի տաք շրջանում՝ 1991-94թթ.: Կոնկրետ օրինակներով հիմնավորենք ասվածը:

Ռազմական գործողությունների դադարեցումը և խնդրի խաղաղ կարգավորումը միշտ գտնվել է հայ-բրիտանական և բրիտանա-ադրբեջանական երկկողմ պաշտոնական շփումների ընթացքում տեղի ունեցած տարաբնույթ քննարկումների կիզակետում: ԵԱՀԽ շրջանակներում Մինսկի խմբի ստեղծման առաջարկը կայացրել է հենց Մեծ Բրիտանիան: Մեծ Բրիտանիան իր աջակցությունն է հայտնել ղարաբաղյան կոնֆլիկտի տաք շրջանում ռազմական գործողությունների դադարեցմանն ուղղված ԵԱՀԽ ՄԽ կողմից կազմված ժամանակացույցերով նախատեսված քայլերի առնչությամբ: Ավելին՝ Մեծ Բրիտանիան ԼՂ կարգավորման հարցում շահագրգիռ արևմտյան այն եզակի պետությունն էր, որ ողջունում էր ռուսական խաղաղապահ գորքերի՝ ղարաբաղյան և ադրբեջանական ուժերի բաժանարար գծում տեղակայելու ռուսական առաջարկը՝ ընդգծելով, որ ռուսական խաղաղապահ ուժերի՝ Ղարաբաղ մուտք գործելը ռազմական գործողությունների դադարեցման միակ ռեալ հնարավորությունն է: Այդ մասին 1993թ. հոկտեմբերին ՀՀ իշխանություններին պաշտոնապես հայտարարել է Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի փոխնախարար Դուգլաս Հոգը: Նույն հարցի շուրջ բրիտանական կողմի ցուցաբերած աջակցության մասին էր հավաստել նաև Մեծ Բրիտանիայի կառավարության հրավերով 1993թ. մայիսի 26-ից 29-ը Լոնդոնում գտնվող ՀՀ պատվիրակության կազմում ընդգրկված արտգործնախարար Վահան Փափազյանը: Շարադրելով ՀՀ տեսակետը Լեռնային Ղարաբաղում խաղաղության գործընթացի հետ կապված Ռուսաստանի,

ԱՄՆ-ի և Թուրքիայի հանդես բերած եռակողմ նախաձեռնության առնչությամբ, բրիտանական պաշտոնական շրջանակների հետ մտքերի փոխանակման ժամանակ Վ. Փափազյանը մասնավորապես ասել է. «Հրադադարի երաշխիքներ ապահովելու համար հարկավոր կլինի տարածաշրջանում տեղաբաշխել խաղաղապահ ուժեր, որոնք օժտված կլինեն միջազգային մանդատով: 2,5 – 3 հազար թվակազմով այդ ուժերը կարող են 70-80 տոկոսով բաղկացած լինել Ռուսաստանի զորքերից»: Ըստ Փափազյանի, Բրիտանիան պաշտպանում էր թե եռակողմ նախաձեռնությունը, թե ՀՀ տեսակետը խաղաղապահների տեղակայման առնչությամբ:

Մեծ Բրիտանիան 1993թ. աշնանը բավականին ջանքեր գործադրեց՝ անդամակցելու ԵԱՀԽ Մինսկի Խմբին, ինչը սակայն չհաջողվեց մասնավորապես հայկական կողմի ընդդիմության պատճառով: Այդուհանդերձ ասվածը վկայում է խնդրի խաղաղ կարգավորման, և հատկապես ռազմական գործողությունների դադարեցման հարցում Մեծ Բրիտանիայի իրական շահագրգռության մասին: ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի նախկին դեսպան Բրայան Ֆոլը, Լևոն Տեր-Պետրոսյանի հետ ունեցած առանձնազրույցում հայտնել է, որ բրիտանացի դիվանագետները մեծ աշխատանք են տարել Ադրբեջանում պատերազմին կողմնակից ուժերին տարհամոզելու ուղղությամբ, ինչպես նաև որոշակի աշխատանքներ տարել Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը վերացնելու ուղղությամբ: Լեռնային Ղարաբաղում խաղաղության հաստատման, հիմնախնդրի կարգավորման հարցում Բրիտանիայի՝ առավելագույնս օբյեկտիվ և ակտիվ ներգրավման, ինչպես նաև Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակումը վերացնելու պահանջով Բրիտանիայի կողմից այդ երկրների իշխանությունների վրա ճնշման գործադրման հարցը քանիցս բարձրացվել է բրիտանական իշխանությունների շրջանում: Այս առնչությամբ զգալի աշխատանքներ է տարել մասնավորապես Բրիտանիայի պառլամենտի բրիտանա-հայկական խորհրդարանական խումբը, որի անդամների թիվը արդեն 1993թ. աշնան դրությամբ անցնում էր չորս տասնյակից: Բրիտանա-հայկական խորհրդարանական խումբը մի քանի քննարկումներ է կազմակերպել Մեծ Բրիտանիայի պառլամենտի Լորդերի պալատում՝ նվիրված ղարաբաղյան հիմնահարցի տարբեր կողմերին և հիմնահարցի կապակցությամբ բրիտանական դիրքորոշմանը. այս ծեռնարկումները իրենց դրական ազդեցությունն են թողել հիմնախնդրի շուրջ բրիտանական իշխանությունների՝ առավել օբյեկտիվ տեսակետի ձևավորման վրա: Հարկ ենք համարում առանձնացնել

1993թ. հոկտեմբերի 30-ի քննարկումը, որտեղ Լորդերի պալատի անդամներ Լորդ Շանոնը, Բարոնուհի Քերոլայն Քոքսը և այլոք, Հայաստան և Լեռնային Ղարաբաղ կատարած իրենց այցելությունների արդյունքում ստացած տպավորությունների հիման վրա օբյեկտիվորեն իրազեկեցին բրիտանական կառավարությանն ու խորհրդարանականներին ղարաբաղյան խնդրի շուրջ շատ դեպքերի և հանգամանքների վերաբերյալ: Ընդգծելով ղարաբաղյան հարցում Բրիտանիայի կառավարության կողմնակալ դիրքորոշման փաստը՝ նրանք պահանջեցին վերջինից ցուցաբերել ավելի հավասարակշռված մոտեցում: Խորհրդարանականները դատապարտեցին նաև Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի և Արցախի շրջափակման փաստը և կոչ արեցին իրենց կառավարությանը՝ օգտագործել իր ազդեցությունը Թուրքիայի հետ իր հարաբերություններում, որպեսզի վերջինս իր հերթին օժանդակի շրջափակման վերացմանը՝ բացելով իր սահմանները Հայաստանի հետ և ստիպելով Ադրբեջանին բացելու ցամաքային բոլոր ճանապարհները, որոնք կապում են Հայաստանը նաև այլ պետությունների հետ:

Գրանցվել են նաև դեպքեր, որոնք Բրիտանիայի խաղաղասիրության հետ կապված այլ պատկեր են առաջարկում: Բրիտանիան հրապարակավ չդատապարտեց և կոչ չարեց Բաքվին՝ դադարեցնելու իր կողմից սանձազերծված ավերիչ պատերազմը, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի ռմբակոծությունները. 1992թ ամռանը Ադրբեջանի զինված ուժերի կողմից իրականացված լայնածավալ ռազմական գործողությունները, ԼՂՀ Մարտակերտի և Շահումյանի շրջանների զավթումն, մարդկանց կոտորածն ու տեղահանությունը, ի տարբերություն ԼՂՀ պաշտպանական ուժերի կողմից ԼՂՀ հարակից շրջանների վրա վերահսկողության առնելուն, որոնք մարմնավորվեցին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի (որի մշտական անդամն է Բրիտանիան) հայտնի 822, 853, 874 և 884 բանաձևերում: Թեև բրիտանական քաղաքական և հասարակական առանձին շրջաններ բարձրացրին իրենց բողոքի ձայնը Ադրբեջանի անմարդկային գործողությունների և դրանց նկատմամբ բրիտանական լռակյաց համաձայնության դեմ, սակայն այդ շրջանները ուժ չունեցան ազդելու բրիտանական դիրքորոշման վրա: Այսպես, 1992թ. հոկտեմբերին բրիտանական մի շարք խորհրդարանականներ Մեծ Բրիտանիայի Մարդու իրավունքների պառլամենտական խմբի նախագահ Լորդ Էյվբըրիի գլխավորությամբ բողոքի նամակ հղելով Մեծ Բրիտանիայի վարչապետին, դատապարտում էին Ադրբեջանի կառավարության՝ Լեռնային Ղարաբաղի և հենց Հայաստանի նկատմամբ ակտիվորեն

իրականացվող էթնիկ զտման քաղաքականությունը և մեղադրում բրիտանական կառավարությանն այն բանում, որ վերջինս, հանուն նավթային բիզնեսի, այս առումով անգործության էր մատնված: Բրիտանացի պատգամավորների մեկ այլ խումբ (Էնթոնի Քումբս, Ֆրենկ Ֆիլդ, Ուին Գրիֆֆիթս, Ռասսել Ջոնսթոն, Ռոբերտ Մաքլենըն) 1993թ հունվարին վարչապետ Ջոն Մեյջորից պահանջեցին դադարեցնել Ադրբեջանի հետ քաղաքական և տնտեսական ցանկացած համագործակցություն, մինչև չիրականացվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1992թ. հոկտեմբերի 27-ի պահանջը՝ զինադադար հաստատելու և Հայաստանի շրջափակումը վերացնելու վերաբերյալ, ինչպես նաև ճնշումներ գործադրել Թուրքիայի վրա՝ պատերազմում իրական չեզոքություն պահպանելու նպատակով: Կոչ-նամակում մեղադրանք էր հնչում առ այն, որ բրիտանա-ադրբեջանական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումից դրդված՝ բրիտանացի խոշոր քաղաքական գործիչները կարծես անպատժելիության հավատ են ներշնչում Ադրբեջանին: Ադրբեջանին չդատապարտելը թեև արդարացնող հանգամանք չէր Բրիտանիայի իշխանությունների համար, այդուհանդերձ պայմանավորված էր բրիտանական նավթային ընկերությունների՝ ադրբեջանական նավթահանքերի շահագործման ծրագրերից դուրս մնալու մտավախությամբ: Տեղին է մտաբերել նաև բրիտանական, ֆրանսիական և թուրքական մամուլում արված բացահայտումներն առ այն, որ անգլիացի լորդ Էրսքինի և թուրք գործարար Մուստաֆա Մութլուի նախաձեռնությամբ 1993-94թթ. ծմռանը Հյուսիսային Կիպրոսից բրիտանացի և թուրք վարձկաններ և զենք էր տեղափոխվել Ադրբեջան: Լոնդոնում ՀՀ դեսպան Արմեն Սարգսյանին Մեծ Բրիտանիայի փոխարտգործնախարար Դ. Հոգը թեև հավաստիացրեց, որ Բրիտանիայի կառավարությունն անմասն է այս գործարքից և որ գործի առնչությամբ հետաքննություն է անցկացվում, սակայն այդպես էլ հետաքննության արդյունքից ոչինչ հայտնի չդարձավ: Փոխարենը բրիտանական իշխանությունները հանդես եկան հայտարարությամբ, որ Ադրբեջանին ռազմական օգնություն թույլ չեն տա: Վերը նշված զրույցի ընթացքում փոխարտգործնախարար Հոգը կարծիք հայտնեց, որ հոդվածի հեղինակը նպատակ է ունեցել ապակողմնորոշել հանրությանը և Բրիտանիայի կառավարությանը դժվարին կացության մեջ դնել:

Այս դեպքերն, ըստ մեզ, թեև որոշակի լարվածություն էին առաջացնում հայ-բրիտանական հարաբերություններում և կասկածի տակ առնում Բրիտանիայի խաղաղասիրական ձգտումները ԼՂ

հակամարտության շուրջ խաղաղության հաստատման առումով, սակայն հակված ենք դրանք որակելու որպես մասնավոր և իրավիճակային: Նույն մամուլի հաղորդմամբ, օրինակ վերոնշյալ գործարքը կատարվել է բրիտանական կողմից մասնավոր անձանց կողմից՝ զենքի և վարձկանների դիմաց ակնկալելով նավթ: Հետագայում տեսնում ենք, որ իրոք Ադրբեջանը Բրիտանիայից ռազմական աջակցություն այդպես էլ չստացավ: Ղարաբաղյան հարցում Բրիտանիայի խաղաղարար ջանքերի վերաբերյալ որոշակի կասկածներ հարուցող մի դեպք ևս արժանի է լուսաբանման. 1994թ. փետրվարի 18-ին Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովի նախաձեռնությամբ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի պաշտպանության նախարարները Մոսկվայում ստորագրեցին արձանագրություն ռազմական գործողությունների դադարեցման և զորքերի որոշակի ետքաշման մասին: Ըստ այդ արձանագրության, 1994թ. մարտի 1-ից սկսվող հրադադարով զորքերը ետ էին քաշվելու այնքան, որպեսզի բացառվեր նրանց միջև որևէ գործողություն, իսկ ձևավորվելիք անվտանգության գոտում տեղակայվելու էին դիտորդները: Միևնույն ժամանակ տեղի էր ունենում Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի պաշտոնական այցը Մեծ Բրիտանիա, որտեղ կնքվեցին բրիտանա-ադրբեջանական համագործակցության ութ համաձայնագրեր, իսկ որ ամենակարևորն է՝ «Նավթի արդյունաբերության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը, որով փաստորեն ադրբեջանական նավթահանքերի շահագործման գործում առաջնահերթ իրավունքները վերապահվեցին «British Petroleum»-ին: Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում ելույթ ունենալիս Ալիևը շեշտել է, որ Ադրբեջանի ղեկավարությունը համաձայնել է համաձայնագիր կնքել «British Petroleum»-ի հետ և այժմ հույս ունի ստանալու Բրիտանիայի աջակցությունը՝ միջազգային ասպարեզում Ադրբեջանի վարած քաղաքականության հարցում: Հատկանշական է, որ Լոնդոնյան այցով վերջնականապես պատմության գիրկն անցավ Ալիևի իշխանության գալուստով սկսված մեղրամիսը ռուս-ադրբեջանական հարաբերություններում, և Ադրբեջանը վերջնականապես կողմնորոշվեց դեպի արևմուտք: Եվ ինչպես տեսանք, հրադադարի վերաբերյալ մոսկովյան պայմանավորվածությունն այդպես էլ չկայացավ, ընդհակառակը, մարտի 1-ից ադրբեջանական կողմը նոր թափով վերսկսեց ռազմական գործողությունները: Այսուհանդերձ, ղարաբաղյան հակամարտությունում ռազմական գործողությունների վերաբերյալ Լոնդոնի դիրքորոշման ուսումնասիրությունը թույլ է տալիս հակվելու այն կարծիքին, որ

Մեծ Բրիտանիան չէր կարող դրդել Ադրբեջանին՝ խախտելու մոսկովյան պայմանավորվածությունը հրադադարի կայացման վերաբերյալ. այդ բայից ոչինչ չէր կարող շահել Լոնդոնը, ավելին՝ ռազմական գործողությունների վերսկսումը դանդաղեցնում էր նավթային գործարքների կայացման գործընթացը, որից, բնականաբար, առավելապես տուժում էին բրիտանական և ամերիկյան նավթային ընկերությունները:

Անհավասարակշիռ քաղաքականության փոփոխությունը. վերջաբանի փոխարեն

Ինչպես ցանկացած հակամարտության, այնպես էլ ղարաբաղյան հակամարտության շուրջ կայունության և խաղաղության հասնելու հարցում մեծ նշանակություն ունի կոնֆլիկտում ոչ անմիջապես ներգրավված, տարածաշրջանում (տվյալ դեպքում Հարավային Կովկասում) շահեր ունեցող արտաքին դերակատարների անկողմնակալ և հավասարակշիռ դիրքորոշումը այդ հիմնախնդրի շուրջ:

Այսպես, Մեծ Բրիտանիայի դիրքորոշումն այս հարցում լուրջ փոփոխություն կրեց 1994-95թթ. սկսած: Այս փաստն իրենց հուշերում և հաշվետվություններում արձանագրում էին հայ դիվանագետները՝ այս հարցում որպես հայկական դիվանագիտության հաջողություն նշելով մի քանի հանգամանքներ, որոնցից են. հիմնահարցում հայկական կողմի դիրքորոշման հետևողականությունը, Հայաստանում տիրող կայունությունը, բարեփոխումների ընթացքի որոշ արդյունքները, տնտեսական համագործակցության դաշտի ընդլայնումը և այլն: Ըստ ՀՀ Արտաքին գործերի նախարարության Ղարաբաղի աշխատախմբի անդամների՝ ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ իր դիրքորոշումը Մեծ Բրիտանիան սկսել է վերագնահատել 1993թ. աշնանից սկսած: Այս ժամանակահատվածից սկսած բրիտանական պաշտոնական շրջանակները Լեռնային Ղարաբաղը սկսեցին հիշատակել որպես հակամարտության կողմ: Կարծում ենք բրիտանական դիրքորոշման հավասարակշռման հարցում իր դերը խաղաց նաև ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի՝ 1994թ. փետրվարի 8-ից 11-ը Մեծ Բրիտանիա կատարած այցը. այդ այցից հետո, ըստ նախագահի, «երկկողմ հարաբերություններն ավելի հստակեցվեցին, ճշտվեցին դիրքորոշումները, մասնավորապես ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ»: Նշենք, որ ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ բրիտանական քաղաքականության հավասարակշռումը պայմանավորված էր մի քանի պատճառներով և հետևանք էր մի շարք իրադարձությունների, որոնցից հարկ ենք համարում առանձնացնել հետևյալը. 1. 1994թ. սեպտեմբերի 20-ի «Արտադրանքի բաժանման պայմանագրի» (հայտնի «Դարի գործար-

քը») կնքումը Ադրբեջանի պետական նավթային ընկերության և օտարերկրյա նավթային ընկերությունների AIOC կոնսորցիումի միջև, 2. 1994թ. մայիսի 12-ի գինադադարը և 3. 1994-95թթ. Ադրբեջանում ներքին կայունության հաստատումը:

«Դարի գործարքով» փաստորեն Մեծ Բրիտանիան ծեռք բերեց ադրբեջանական նավթահանքերի շահագործման և նավթի արտահանման ոլորտում կայուն երաշխիքներ. այս հանգամանքն արդեն որոշակի առումով փարատում էր նավթի արդյունահանման և արտահանման ծրագրերից դուրս մնալու բրիտանական մտավախությունները և այլևս թույլ էր տալիս բրիտանական իշխանություններին՝ չկատարելու երբեմն-երբեմն ստիպված ոչ հայանպաստ հայտարարություններ: Ռազմական գործողությունների ավարտը ազդարարում էր ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Հայաստանում որոշ ներդրումային ռիսկերի վերացում, ինչն էլ խրախուսում էր այս երկրներում բրիտանական ներդրումների ծավալմանը: Մասնավորապես սկսած 1995թ. ինչպես բրիտանական ներդրումային հոսքերը, այնպես էլ հայ-բրիտանական երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները սկսեցին շեշտակի զարգանալ: Պատերազմական գործողությունների ավարտն ինքնին մեծ դեր ունեցավ Ադրբեջանի ներքաղաքական կայունության հաստատման գործում: Դե, իսկ Ադրբեջանում ներքին կայունության հաստատումը իրատեսական չէր դարձնում շրջադարձային փոփոխությունները այդ պետության արտաքին քաղաքականության բնագավառում, ինչից կարող էին տուժել արևմտյան, մասնավորապես բրիտանական նավթային շահերն այս երկրում:

Սվետիկ Հարությունյան
«Հայկի սերունդ» ԵՀԿ

ԼՂՀ հռչակման իրավական հիմքերը

Խոսելով ԼՂՀ անկախության մասին, հարկ է հետադարձ հայացք ձգել դեպի 1988թ., որը շրջադարձային տարի դարձավ Արցախ աշխարհի համար:

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման նստաշրջանը, երկրի Սահմանադրությանը համապատասխան, որոշում ընդունեց դիմել Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու մասին:

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ